ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07, Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 30.1/15.1/13549-17
«25» 08 2017 թ

Ձեր № Ե-2496; 23.06.2017թ.

«Ա.Դ.ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան,

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեն քննության առնելով Ձեր գրությունը դիմել էր Արենի-1 քարայրի հնագիտական արշավախմբի ղեկավարին (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարյանին), որի պատասխանը տրամադրում ենք ստորև.

«Ի պատասխան ձեր 23 հունիսի 2017 թ. Ե-2496 նամակի հայտնում ենք, որ ողջունում ենք տիկին Պատրիսիա Դոդի հետաքրքրությունը դեպի Հայաստանի հանգույն անցյալն ու հարուստ մշակութային ժառանգությունը: Ինչ վերաբերում է Արենի-1 քարայրի հետ կապված միջադեպին, ապա ուզում ենք տեղեկացնել Ձեզ, որ քարայրի զբոսաշրջության նպատակով օգտագործման իրավունքի հարցը գտնվում է մրցույթային գործընթացում և տիկին Դոդի կողմից բարձրացված հարցը՝ կապված մուտքավճարի կտրոն տրամադրելուն շուտով կկարգավորվի: Միևնույն ժամանակ՝ որպես բարի կամքի դրսևորում՝ քարայրը բաց է այցելություն կատարել ցանկացողների և հյուրերի համար: Որպես այդպիսին մուտքի վարձավճար սահմանված չէ և այցելուներն իրենք ենք որոշում խրախուսել ուղեկցող անձին թե ոչ, քանի որ պահակի պարտավորությունների մեջ այցելուներին ուղեկցելը չի ներառված, իսկ առանց նրա ուղեկցության քարայր այցելելն անհնար է: Տիկին Դոդը հուշարձան է

Կատարող՝ Մարի Գրիգորյան
011 597156

այցելել «One way tour» տուրիստական ընկերության միջոցով, որն ինքն է որոշում իր վարձավճարային քաղաքականությունը: Ուստի կարծում ենք ճիշտ կլինի, որ նա դիմի իրեն ուղեկցած ընկերությանը և պարզաբանում պահանջի, քանի որ սույն պարագայում կտրոն կարող էր տրամադրել ընկերությունը: Հուշարձանի պահակն անձամբ այցելուներից որևէ վարձավճար չի պահանջել»:

Հարգանքով՝

ՄԵԽԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ